հատին, ցանկալին 'ի չարս Պատրիարքաց աթոռոյն Երուսաղէմի Գրիգոր հայրապետն Պարոն Տէր, հասեալ 'ի խոր ծերութեան հանգեաւ խաղաղութեամբ 'ի տէր, և թաղեցաւ 'ի վանս Ս. Փրկչի, վարեալ զիշխանութիւն Պատրիարքութեան ամենայն զգաստութեամբ ամս 32, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի. (1645):

Յետ այսորիկ սովորութիւն եղեւ միաբանաց Ս. Յակոբայ թաղել զՊատրիարքունս և զեպիսկոպոսունս 'ի գաւթի վանաց Ս. Փրկչի. զի մինչեւ ցայս վայր զոմանս թաղէին 'ի գաւթի տաճարին Ս. Յակոբայ, և այլոց բազմացն չեն յայտնի. զի թերեւս խառն ընդ ուխտաւորաց թաղէին 'ի ճառներ կոչեցեալ տեղին. զորմէ գրեն Եւրոպացի ճանապարհորդք. «Ադարակն Ակեղդամայ, կամ գերեզմանատունն ուխտաւորաց, է 'ի հարաւակողմն լերին Սիոնի, 'ի վերկոյս ձորոյն Գեհոնի 'ի մէջ ցամաք բլրի, որ 'ի հին ժամանակս էր փոքր ինչ արտ 'ի մէջ քարաժայռ լերանց, զոր Հրեայք գնեցին 'ի Բրուտէ 30 արծաթի. զոր մատնիչն Յուդայ յետս դարձոյց, և արարին գերեզման օտարաց, որք մեռանին յԵրուսաղէմ. Մատթ. Իէ. 1. 7. 8: Գործ. Ա. 19: Ի սոյն ներկայ ժամանակիս տեղւոյս այսմիկ տիրեն Հայազգի քրիստոնեայք, որք արարեալ են իւրեանց գերեզմանատուն գնեալ 'ի Թրքաց. 'ի միջին տեղի կառուցեալ կայ շինուած ինչ քառանկիւնի կամարակապ. 40 ոտնաչափ երկայն և նոյնչափ լայն. և ունի յառաստաղն 3. 4. կամ 5 լուսամուտս, յորոց իջուցանեն Հայք պարանաւ զմարմին ննջեցեալ Հայ ուխտաւորաց, որք մեռանին յԵրուսաղէմ: Բայց նոքա, այսինքն Հայք իջանեն անդ ուրոյն ճանապարհաւ, կամ դրամբ 'ի վայր. և դնեն զմարմին մեռելոց 'ի վերայ գետնի առանց թաղելոյ. միայն պատանօք կարդաւ հուպ առ հուպ (քով քովի), և այնպէս մնան յերեսս գետնի՝ եւ ոչ ծածկեն հողով. եւ 'ի վերայ այսր ամենայնի զկնի մի քանի աւուրց չորանան առանց հոտելոյ: Թարգմանեալ 'ի Գերմաներէն գրքէ, տպեալ 1736:

Իսկ Մարինոս Լատին այլ ինն եղանակաւ զրէ զայսմանէ, թէ 'ի 24 ժամս՝ մոխիր դարձուցանէ զդին, եթէ թաղեսցի 'ի հող. եւ թէ՝ զչիոյն Հեղինէ նաւուք տարաւ